

Սոյն վկայական կոնդակը վաւերականութեան ամէն նշաններն ունի: Գլուխը նկարուած է եկեղեցւոյ մը աշտարականման կաթողիկէներ. կը կրէ երեք հատ կարմրագոյն (կաթողիկոսական) բոլորակ մեծ կնիք, որուն մէջտեղը կայ Փրկչի կիսանդրին եւ ասոր շուրջը գրուած՝ «ՅՍԻ ՔՍԻ ԾՌՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԹՂԿՍ ԱՄ ՀԱՅՈՑ ՌՃԾԳ», որ է Քրիստոսի թուական 1705: Գարձեալ կոնդակին եզերքը կոխուած է ութանկիւն կնիք մը, որուն ընթերցուածն է, «ՔՍԻ ԾՌՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ», Բնագիրն հետեւեալն է՝

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէս Կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք տանն Կիլիկիոյ, եւ սպասաւոր մեծի եւ սքանչելաշնորհ Սուրբ Ալոյն Լուսաւորչի. եւ այլ զերապատիւ եւ լուսաբողբոջ սրբազան հայրապետաց ի թուականութեան Հայոց ՌՃՂԱ եւ ի յամենան Օգոստոսի Ժե. ի մեծահաշակ եւ ի կենսունակ հրաշալի տօնի վերափոխման ամենօրհնեալ սրբոյ Աստուածածնին: Կամօք եւ հաճութեամբ եւ ողորմութեամբ անեղին եւ անմահին Աստուծոյ, անուրբ եւ աներբ, անորակ, անքանակ, անճառելի եւ անբաժանելի Ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ այժմ եւ անզրաւ յաւիտեանս ամէն: Կամօք եւ յօժարութեամբ եւ ընտրութեամբ մեծամեծ վարդապետաց եւ նոցին իսկ վկայական քարտիկիւ եւ նամակաւ, եւ հաճութեամբ բաղում մեծամեծ եւ բարեպաշտ անձանց զկոստանդնուպօլսեցի արապեան զՄեսրօպ վարդապետն ձեռնադրեցի Եպիսկոպոս Լանբերոնի կաթողիկէ Եկեղեցւոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ահաւոր անուամբ ամենասուրբ Երրորդութեան եւ նշանաւոր սուրբ խաչիւս,